ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
№ ԱԳՆ-ՊԱԾ-ԲԸԱՀԾՁԲ-16/13-30

ք. Երևան 16.08.2016թ.

ՀՀ ԱԳՆ <<Պետական արարողակարգի ծառայություն>> գործակալությունը, ի դեմս գործակալության պետի պ/կ Ա. Աաղաջանյանի, որը գործում է գործակալության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից և «ԱՅԲ-ՏՈՒՐ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Մ. Ավանեսյանի (այսուհետև՝ Կատարող), որը գործում է որպես անհատ ձեռնարկատեր մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տրանսպորտային ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող № 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի № 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի № 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի № 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի № 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Կատարողը Ծառայության մատուցման ավարտից 5 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված № 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը(Հավելված 3.1)

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից եռօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 2 950 000 (երկու միլիոն ինը հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն՝ նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի № 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2016թ. դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և պայմանները տարածվում են 2016թ-ի հունիսի 24-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝

Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է **11** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու	Կատարող
ՀՀ ԱԳՆ <<Պետական արարողակարգի ծառայություն>> գործակալություն Ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/8 Կառավարական 2 շենք ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011291052 ՀՎՀՀ 02545976 Ա. Աաղաջանյան (ստորագրություն) Կ.Տ.	«ԱՅԲ-ՏՈՒՐ» ՍՊԸ Հասցե՝ ք. Երևան, Շևչենկո 7, բն. 10 ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆԲԱՆԿ Շենգավիթ մ/ճ Հ/Հ 16046200 0846 ՀՎՀՀ 02243186 Տնօրեն Ս. Ավանեսյան (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված 1
16.08.2016թ. կնքված
N ԱԳՆ-ՊԱԾ-ԲԸԱՀԾՁԲ-16/13-30 ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ (ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ)

Տրանսպորտային ծառայությունների նկարագիրը
Ընդհանուր պայմանները
1. Բոլոր տեսակի տրանսպորտային միջոցները պետք է լինեն տեխնիկապես սարքին վիճակում, 2. Բոլոր տեսակի տրանսպորտային միջոցները պետք է ունենան անթերի արտաքին տեսք, իսկ սրահները պետք է լինեն թարմ և մաքուր վիճակում: 3. Բոլոր տեսակի տրանսպորտային միջոցները պետք ունենան սարքին օդորակիչ: 4. Բոլոր տեսակի տրանսպորտային միջոցները չպետք է համալրված լինեն հեղուկ գազի բալոններով: 5. Բոլոր վարորդները պետք է ունենան առնվազն 5 տարվա վարորդական ստաժ, ինչպես նաև պաշտոնական պատվիրակությունների հետ աշխատելու փորձ: Ծառայությունների մատուցման ժամանակահատվածում պետք է ունենան ներկայանալի արտաքին տեսք, հյուրերի նկատմամբ ցուցաբերեն հարգալից և հոգատար վերաբերմունք:

№	Մեքենայի մակնիշ	24.06.2016թ.	
		Կատարված աշխատանքը, ժամերը	Գինը
1	Մերսեդես ՎԻԱՆՈ /մարդատար մինիբուս/	1. Երևան-«Զվարթնոց» օդանավակայան 2. Էջմիածին-Երևան-Էջմիածին-Երևան	20.000դր. 50.000դր.
2	Մերսեդես Սպրինտեր /միկրոավտոբուս/	1. Երևան-«Զվարթնոց» օդանավակայան 2. Էջմիածին-Երևան-Էջմիածին-Երևան	20.000դր. 60.000դր.
3	Մերսեդես ՎԻԱՆՈ /մարդատար մինիբուս/	1. Երևան-«Զվարթնոց» օդանավակայան 2. Էջմիածին-Երևան-Էջմիածին-Երևան	20.000դր. 50.000դր.
4	Մերսեդես ՎԻԱՆՈ /մարդատար մինիբուս/	1. Երևան-«Զվարթնոց» օդանավակայան 2. Էջմիածին-Երևան-Էջմիածին-Երևան	20.000դր. 50.000դր.
5	Մերսեդես Սպրինտեր /միկրոավտոբուս/	1. ք.Երևանում -Էջմիածին 2. Երևան-«Զվարթնոց» օդանավակայան 3. Երևան-Գյումրի-Գյումրի քաղաքում+Գիշերակաց Գյումրիում	30.000դր. 20.000դր. 50.000դր.+ 20.000դր.
6	Մերսեդես Սպրինտեր /միկրոավտոբուս/	1. Երևան-«Զվարթնոց» օդանավակայան 2. Էջմիածին-Երևան-Էջմիածին-Երևան	20.000դր. 60.000դր.

7	**Մերսեդես Սպրինտեր /միկրոավտոբուս/**	1. Երևան-«Զվարթնոց» օդանավակայան 2. Էջմիածին-Երևան-Էջմիածին-Երևան	20.000դր. 60.000դր.
8	**Մերսեդես Սպրինտեր /միկրոավտոբուս/**	Ք.Երևանում+ Օդանավակայան	60.000դր.
9	**Մերսեդես Սպրինտեր /միկրոավտոբուս/**	Ք.Երևանում+ Օդանավակայան	60.000դր.
10	**Մերսեդես ՎԻԱՆՈ /մարդատար մինիբուս/**	1. Երևան-«Զվարթնոց» օդանավակայան 2. Էջմիածին-Երևան-Էջմիածին-Երևան	20.000դր. 50.000դր.

№	Մեքենայի մակնիշ	25.06.2016թ.	
		Կատարված աշխատանքը, ժամերը	**Գինը**
1	**Մերսեդես ՎԻԱՆՈ /մարդատար մինիբուս/**	1.Երևան-Էջմիածին-Երևան-Էջմիածին-Երևան 2.Երևան-«Զվարթնոց» օդ. /10:00/ 3. Երևան-«Զվարթնոց» օդ./17:00/	50.000դր. 20.000դր. 20.000դր.
2	**Մերսեդես Սպրինտեր /միկրոավտոբուս/**	1.Երևան-Էջմիածին-Երևան-Էջմիածին-Երևան 2.Երևան-«Զվարթնոց» օդ. /10:00/	60.000դր. 20.000դր.
3	**Մերսեդես ՎԻԱՆՈ /մարդատար մինիբուս/**	1.Երևան-Էջմիածին-Երևան-Էջմիածին-Երևան 2.Երևան-«Զվարթնոց» օդ. /10:00/	50.000դր. 20.000դր.
4	**Մերսեդես ՎԻԱՆՈ /մարդատար մինիբուս/**	1.Երևան-Էջմիածին-Երևան-Էջմիածին-Երևան 2.Երևան-«Զվարթնոց» օդ. /10:00/	50.000դր. 20.000դր.
5	**Մերսեդես Սպրինտեր /միկրոավտոբուս/**	1. Գյումրի քաղաքում-Գյումրի-Երևան 2. Երևան-Էջմիածին-Երևան-Էջմիածին-Երևան	50.000դր. 60.000դր.
6	**Մերսեդես Սպրինտեր /միկրոավտոբուս/**	1.Երևան-Էջմիածին-Երևան-Էջմիածին-Երևան 2.Երևան-«Զվարթնոց» օդ. /10:00/	60.000դր. 20.000դր.
7	**Մերսեդես Սպրինտեր /միկրոավտոբուս/**	1.Երևան-Էջմիածին-Երևան-Էջմիածին-Երևան 2.Երևան-«Զվարթնոց» օդ. /10:00/	60.000դր. 20.000դր.
8	**Մերսեդես ՎԻԱՆՈ /մարդատար մինիբուս/**	Երևան-«Զվարթնոց» օդ. /06:00/	20.000դր.
9	**Մերսեդես Սպրինտեր /միկրոավտոբուս/**	1.Երևան-«Զվարթնոց» օդ. /06:00/ 2. Երևան-«Զվարթնոց» օդ./18:00/	20.000դր. 20.000դր.
10	**Մերսեդես Սպրինտեր /միկրոավտոբուս/**	Երևան-«Զվարթնոց» օդ. /17:00/	20.000դր.
11	**Մերսեդես ՎԻԱՆՈ /մարդատար մինիբուս/**	Երևան-«Զվարթնոց» օդ. /17:00/	20.000դր.
12	**Մերսեդես ՎԻԱՆՈ /մարդատար մինիբուս/**	1.Երևան-Էջմիածին-Երևան-Էջմիածին-Երևան 2.Երևան-«Զվարթնոց» օդ. /10:00/	50.000դր. 20.000դր.
13	**Մերսեդես ՎԻԱՆՈ /մարդատար մինիբուս/**	Երևան- Գյումրի- «Շիրակ» օդանավակայան- Գյումրի քաղաքում- Երևան	90.000դր.
14	**Մերսեդես Սպրինտեր /միկրոավտոբուս/**	Երևան- Գյումրի- «Շիրակ» օդանավակայան- Գյումրի քաղաքում- Երևան	100.000դր.
15	**Մերսեդես ՎԻԱՆՈ /մարդատար մինիբուս/**	Երևան- Գյումրի- «Շիրակ» օդանավակայան- Գյումրի քաղաքում- Երևան	90.000դր.
16	**Մերսեդես ՎԻԱՆՈ /մարդատար մինիբուս/**	Երևան- Գյումրի- «Շիրակ» օդանավակայան- Գյումրի քաղաքում- Երևան	90.000դր.

17	Մերսեդես Սպրինտեր /միկրոավտոբուս/	Երևան- Գյումրի- «Շիրակ» օդանավակայան- Գյումրի քաղաքում- Երևան	100.000դր.
18	Մերսեդես Սպրինտեր /միկրոավտոբուս/	Երևան- Գյումրի- «Շիրակ» օդանավակայան- Գյումրի քաղաքում- Երևան	100.000դր.
19	Մերսեդես ՎԻԱՆՈ /մարդատար մինիբուս/	Երևան- Գյումրի- «Շիրակ» օդանավակայան- Գյումրի քաղաքում- Երևան	90.000դր.

№	Մեքենայի մակնիշ	26.06.2016թ.	
		Կատարված աշխատանքը, ժամերը	Գինը
1	Մերսեդես ՎԻԱՆՈ /մարդատար մինիբուս/	1. Երևան-Էջմիածին-Խոր Վիրապ 2. «Զվարթնոց» օդանավակայան-Երևան	65.000դր. 20.000դր.
2	Մերսեդես Սպրինտեր /միկրոավտոբուս/	1. Երևան-Էջմիածին-Խոր Վիրապ 2. «Զվարթնոց» օդանավակայան-Երևան	80.000դր. 20.000դր.
3	Մերսեդես ՎԻԱՆՈ /մարդատար մինիբուս/	1. Երևան-Էջմիածին-Խոր Վիրապ 2. «Զվարթնոց» օդանավակայան-Երևան	65.000դր. 20.000դր.
4	Մերսեդես ՎԻԱՆՈ /մարդատար մինիբուս/	1. Երևան-Էջմիածին-Խոր Վիրապ 2. «Զվարթնոց» օդանավակայան-Երևան	65.000դր. 20.000դր.
5	Մերսեդես Սպրինտեր /միկրոավտոբուս/	1. Երևան-Էջմիածին-Խոր Վիրապ 2. «Զվարթնոց» օդանավակայան-Երևան	80.000դր. 20.000դր.
6	Մերսեդես Սպրինտեր /միկրոավտոբուս/	1. Երևան-Էջմիածին-Խոր Վիրապ 2. «Զվարթնոց» օդանավակայան-Երևան	80.000դր. 20.000դր.
7	Մերսեդես Սպրինտեր /միկրոավտոբուս/	1. Երևան-Էջմիածին-Խոր Վիրապ 2. «Զվարթնոց» օդանավակայան-Երևան	80.000դր. 20.000դր.
8	Մերսեդես Սպրինտեր /միկրոավտոբուս/	Երևան-«Զվարթնոց» օդանավակայան	20.000դր.
9	Մերսեդես Սպրինտեր /միկրոավտոբուս/	Երևան-«Զվարթնոց» օդանավակայան	20.000դր.
10	Մերսեդես ՎԻԱՆՈ /մարդատար մինիբուս/	1. Երևան-Էջմիածին-Խոր Վիրապ 2. «Զվարթնոց» օդանավակայան-Երևան	65.000դր. 20.000դր.
ԸՆԴԱՄԵՆԸ		**2.950.000 դրամ** **Երկու միլիոն ինը հարյուր հիսուն հազար ՀՀ դրամ**	

Ծառայության մատուցման ժամկետը	
Սկիզբը	Ավարտը
24.06.2016թ	26.06.2016թ

Պատվիրատու	Կատարող
ՀՀ ԱԳՆ <<Պետական արարողակարգի ծառայություն>> գործակալություն Ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/8 Կառավարական 2 շենք ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011291052 ՀՎՀՀ 02545976 Ա. Աղաջանյան (ստորագրություն) Կ.Տ.	«ԱՅԲ-ՏՈՒՐ» ՍՊԸ Հասցե՝ ք. Երևան, Շևչենկո 7, բն. 10 ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆԲԱՆԿ Շենգավիթ մ/ճ Հ/Հ 160462010846 ՀՎՀՀ 02243186 Տնօրեն Մ. Ավանեսյան (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված 2
16.08.2016թ. կնքված
N ԱԳՆ-ՊԱԾ-ԲԸԱՀԾՁԲ-16/13-30 ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ. Պետական բյուջեի միջոցների հաշվին ըստ ամիսների, ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	Օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	**1.Տրանսպորտային ծառայություններ**								2 950 000	2 950 000	2 950 000	2 950 000	2 950 000	2 950 000

**** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:***

Պատվիրատու	**Կատարող**
ՀՀ ԱԳՆ <<Պետական արարողակարգի ծառայություն>> գործակալություն Ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/8 Կառավարական 2 շենք ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011291052 ՀՎՀՀ 02545976 Ա. Աղաջանյան (ստորագրություն) Կ.Տ.	«ԱՅԲ-ՏՈՒՐ» ՍՊԸ Հասցե՝ ք. Երևան, Շևչենկո 7, բն. 10 ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆԲԱՆԿ Շենգավիթ մ/ճ Հ/Հ 160462010846 ՀՎՀՀ 02243186 Տնօրեն՝ Մ. Ավանեսյան (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված 3
16.08.2016թ.կնքված
№ ԱԳՆ-ՊԱԾ-ԲԸԱՀԾՁԲ-16/13-30 ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ

Հասցե
Հ/Հ
ՀՎՀՀ

Պատվիրատու

Հասցե
Հ/Հ
ՀՎՀՀ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<>> <<>> *2016թ*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2016 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____
և
*Պայմանագրի կողմը՝ ի դեմս*_____, *հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 2016թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.*
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
16.08.2016թ.կնքված
№ ԱԳՆ-ՊԱԾ-ԲԸԱՀԾՁԲ-16/13-30 ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2016թ. ------- -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 2016թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց	**Ընդունեց**
	հայտը նախագծած ներկայացուցիչ՝
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
ստորագրություն	ստորագրություն